

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՏԿԵՆ-ՀՐԱՄԱՇՁԲ-2019/13Ե-2**

ք. Երևան

«22» օգոստոսի 2019թ.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների մախարարությունը, ի դեմս մախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Հ.Բատիկյանի, որը գործում է մախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների մախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Ա.Ավագյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառու պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, մախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-մախահաշվով մախատեսված Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ101+400-կմ108+400 հատվածի հիմնանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով մախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի մախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-մախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով մախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 2019թ.-ին իրականացվելիք աշխատանքների համար՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 150 օր, բայց ոչ ուշ, քան 2019թ. դեկտեմբերի 10-ը, իսկ մնացած իրականացվելիք աշխատանքների համար՝ ֆինանսական միջոցներ մախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 30 օր:

Պայմանագրով մախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով մախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով մախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով մախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով մախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում մախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում մախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով մախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով մախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զինել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը: Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետ է սահմանվում պատվիրատուի կողմից ողջ ծավալով աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 3 տարին:

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 1 011 159 948 (մեկ միլիարդ տասնմեկ միլիոն հարյուր հիսունինը հազար ինը հարյուր քառասունութ) ՀՀ դրամ, որից 168 526 658 (մեկ հարյուր վաթսուութ հազար հինգ հարյուր քսանվեց հազար վեց հարյուր հիսունութ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն, իսկ 2019 թվականին իրականացվելիք աշխատանքների գինը կազմում է 881 999 994 (ութ հարյուր ութսունմեկ միլիոն ինը հարյուր ինսունինը հազար ինը հարյուր ինսունչորս) ՀՀ դրամ, որից 146 999 999 (մեկ հարյուր քառասունվեց միլիոն ինը հարյուր ինսունինը հազար ինը հարյուր ինսունինը) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը: Իսկ մնացած աշխատանքների համար վճարումը կիրականացվի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, որի վերաբերյալ կողմերի միջև կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ $VQ = UQ / NQ \times 40$, որտեղ՝

UQ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

NQ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

VQ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

40 –ն նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուին պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:⁴³ Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:⁴⁴

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուին ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ձանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված

⁴³ Եթե պայմանագիրը կնքվել է «Նոս մենբերի մասին» № 33 օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունը լուծելու ներքին չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավելի ափսոսածի նկատմամբ հաշվարկվում է պայմանագրով այդ ափսոսածի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

⁴⁴ Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորությունները չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


ՊԱՏԿԻՐԱՏՈՒ

<< տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների
նախարարություն

<< ք.Երևան, Կառավարական տուն 3,
<< կենտրոնական գանձապետարան

<ՎՀՀ-02578338

<ՀՀ 900011025823


/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱՆՈՒԹ

<<ԽաչՀար>> ՍՊԸ


<< ք.Երևան, Հովսեփյան 95Ա

<<Ակբա-Կրեդիտ Ազրիկոլ բանկ>> ՓԲԸ Արմենիա մ/ճ

<ՀՀ 220410124014000

<ՎՀՀ 00018682


/ստորագրություն/
Կ.Տ



**ՉԱՓԱՐԱԺԻՆ 2
ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ**

Մ-2, Երևան-Երասխա-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ101+400-
կմ108+400 հատվածի հիմնանորոգման աշխատանքների
(Ընդհանուր)

ՀՀ հազ. դրամ

NN	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ.	Ծավալը	Միավորի արժեքը *	Ընդհանուր արժեքը
1	2	3	4	5	6
	I Հողային աշխատանքներ				
1	Հողային պաստառի քանդում (10ելV կարգի բնահող) էքսկ. 1.0 մ ³ շ.տ. բարձրում ա/ի տեղափոխում լցակայան 3 կմ	մ ³	18991.56	1.854	35 210.352
2	Նույնը ձեռքի աշխատանքով	մ ³	118.7	6.802	807.397
3	10ելV կարգի բնահողի մշակում բուլդոզերով, տեղափոխում 20մ, բարձրում էքսկ. 1.0 մ ³ շ.տ. ա/ի տեղափոխում լցակայան 3 կմ	մ ³	4629.2	1.884	8 721.413
	II Երթևեկային մաս				
1	Ավազակույզային շերտի տեղադրում h=10 սմ	մ ²	67827.05	0.559	37 915.321
2	Խճային հիմքի տեղադրում h=15 սմ բիտումի 4.12տ/1000մ ² տարածումով	մ ²	67827.05	3.470	235 359.864
3	Խոշորահատիկ ա/բ h=6 սմ	մ ²	67827.05	6.054	410 624.961
4	Մանրահատիկ ա/բ h=4 սմ	մ ²	67827.05	4.492	304 679.109
	III Իջատեղեր և մուտքեր				
1	Հողային պաստառի քանդում բուլդոզերով տեղափոխում մինչև 10մ, բարձրում էքս. 0.65մ ³ շ.տ. ա/ի և տեղափոխում լցակայան 3կմ	մ ³	210	1.861	390.810
2	Նույնը ձեռքի աշխատանքով	մ ³	14.54	6.803	98.916
3	Հողային պաստառի հարթեցում բուլդոզերով	մ ²	1403.38	0.019	26.664
4	Մետ. d=0.273 մ խողովակի ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջը	գծմ	4	1.100	4.400
5	Մետ. d=0.325 մ խողովակի ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջը	գծմ	5	1.275	6.375
6	Ա/ց d=0.250 մ խողովակի ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջը	գծ.մ	166.5	0.588	97.902
7	10ելV կարգի բնահողի մշակում էքսկավատորով 0.65մ ³ շ.տ. բարձրում ա/ի տեղափոխում լցակայան 3 կմ	մ ³	24.54	1.952	47.902
8	10ելV կարգի բնահողի մշակում էքսկավատորով 0.65 մ ³ կողքի կուտակում հետլիցքի համար	մ ³	60	0.704	42.240
9	Նույնը ձեռքի աշխատանքով	մ ³	5.28	5.000	26.400
10	Ավազակույզային շերտ h=10սմ (մետ. d=0.325մ խող. տակ)	մ ³	11.23	5.310	59.631
11	Մետ. d=0.325մ խողովակների տեղադրում	գծմ	249.5	29.100	7 260.450
12	Մետ. d=0.325մ խողովակների ջրամեկուսացում	գծմ	235.1	1.778	418.008
13	Միաձույլ բետոնյա գլխամասերի կառուցում (B-20)	մ ³	12.96	111.320	1 442.707
14	Գլխամասերի ջրամեկուսացում	մ ²	51.36	1.200	61.632
15	Հետլիցքի իրականացում բուլդոզերով	մ ³	59	0.830	48.970
16	Հետլիցքի իրականացում ձեռքով	մ ³	6.28	1.710	10.739
17	Խճային հիմք h=12 սմ	մ ²	1403.38	1.704	2 391.360
18	Մանրահատիկ ա/բ h=4 սմ	մ ²	1403.38	4.442	6 233.814

	IV. Ե-1-20-50 հավաքովի վաքեր				
1	10eIV բնահողի քանդում է.քս. 0,65մ ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 3կմ	մ ³	40	1.925	77.000
2	10eIV բնահողի քանդում ձեռքով բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 3կմ	մ ³	8.36	6.802	56.865
3	Գոյություն ունեցող քայքայված Ե-1-20-50 վաքերի քանդում բարձում է.քս. 0.65 մ ³ ա/ի և տեղափոխում լցակույտ 3 կմ	մ ³	28.0	1.992	55.776
4	Ե-1-20-50 հավաքովի վաքերի տեղադրում	մ ³	37.2	136.700	5 085.240
5	Վաքերի ջրամեկուսացում	մ ²	353.4	1.200	424.080
6	Ավազակոպձային շերտ h=10սմ	մ ³	18.6	5.913	109.982
	V Արգելափակոցներ				
1	Սյուների ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջը	հատ	429	4.133	1 773.057
2	C-1 տիպի պլաստիկ ուղղորդ սյուների տեղադրում	հատ	250	5.779	1 444.750
3	Նոր մետաղյա արգելափակոցների տեղադրում	գծմ	3718	24.270	90 235.860
4	Գոյություն ունեցող պարապետների ներկում	մ ²	258	0.705	181.890
	VI Կողմակներ և կողային առուներ				
1	Կողմակների լրացում ավազակոպիձով հսիջ. =4սմ	մ ²	20706.8	0.408	8 448.374
2	Կողային առուների մաքրում	գծմ	6025.0	0.533	3 211.325
	VII Ե/բ ուղղանկյուն խողովակների նորոգում				
1	Կենցաղային աղբի մաքրում ձեռքով, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 3.0 կմ	մ ³	66.3	4.505	298.682
2	Հունի մաքրում (10eIV բնահող) էքսկավատորով 0.65մ ³ շ.տ բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 3.0 կմ	մ ³	89.47	1.925	172.230
3	Հունի մաքրում (10eIV բնահող) ձեռքի աշխատանքով, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 3.0 կմ	մ ³	105.04	6.802	714.482
4	Խողովակի մեջ մաքրում ձեռքի աշխատանքով 10eIV կարգի բնահող), բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 3.0 կմ	մ ³	28.8	6.802	195.898
5	Գլխամասի իրականացում միաձույլ բետոնով B20 F100	մ ³	6.25	68.830	430.188
6	Գլխամասի բարձրացում միաձույլ բետոնով B20 F100	մ ³	7.52	68.820	517.526
7	Գլխաղիթի ապոմոնտաժում տեղափոխում լցակույտ 3.0 կմ	մ ³	2.4	28.000	67.200
8	Գլխամասի սվաղ ցեմենտ-ավազային շաղախով b=5սմ	մ ²	6.8	3.267	22.216
9	Մուտքում ձեռքի լրացում միաձույլ մանրահատիկ բետոնով b=8սմ	մ ³	0.21	57.940	12.167
10	Խողովակի վնասված սեկցիաների սվաղ ելքում ցեմենտ-ավազային շաղախով b=5սմ	մ ²	15.6	3.267	50.965
11	Ճակատային մասերի սվաղ b=5սմ ցանցով	մ ²	8.06	5.087	41.001
12	Թների սվաղ ցեմենտ-ավազային շաղախով b=5սմ	մ ²	55.4	3.267	180.992
13	Թների կառուցում միաձույլ բետոնով B20 F100	մ ³	2.56	68.830	176.205
	VIII Ե/բ d=1.0մ, d=1.25մ, d=1.5մ խողովակների նորոգում				
1	Կենցաղային աղբի մաքրում ձեռքով, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 3.0 կմ	մ ³	3.5	4.505	15.768
2	Հունի մաքրում (10eIV բնահող) էքսկավատորով 0.65մ ³ շ.տ բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 3.0 կմ	մ ³	1.5	1.925	2.888
3	Հունի մաքրում (10eIV բնահող) ձեռքի աշխատանքով, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 3.0 կմ	մ ³	13	6.802	88.426

4	Խողովակի մեջ մաքրում ձեռքի աշխատանքով (10eIV կարգի բնահող), բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 3.0 կմ	մ ³	32	6.802	217.664
5	Գլխամասի իրականացում միաձույլ բետոնով B20 F100	մ ³	4.4	111.320	489.808
6	Գլխամասի բարձրացում միաձույլ բետոնով B20 F100	մ ³	3.88	68.830	267.060
7	Գլխադիրի ապոմոնտաժում տեղափոխում լցակույտ 3.0 կմ	մ ³	0.64	28.000	17.920
8	Գլխամասի սվաղ ցեմենտ-ավազային շաղախով b=5սմ	մ ²	1.6	3.267	5.227
9	Թևերի կառուցում միաձույլ բետոնով B20 F100	մ ³	2.56	68.830	176.205
IX Գաբիոնային պատի տեղադրում Կմ 101+503-ում					
1	Գաբիոնների համար փոստրակի փորման հողային աշխատանքներ 0.65մ ³ շերտի տարողությամբ էքսկավատորով գրունտի կողքի պահեստավորումով:	մ ³	4.2	0.704	2.957
2	Հատակի համահարթեցման աշխատանքներ ձեռքով:	մ ²	8	0.340	2.720
3	Գաբիոնային շարվածք 1x1x0.5 (քար) : Հիմնակմայք d=6.5 մմ , 1գծմ=0.260 կգ, 1հատ=12.3գծմ 32 հատ 393.6/102.34 գմ/կգ Ցանցը ամրակով d=3.0 մմ, 1մ ² =1.445 կգ, 1 հատ=4 մ ² 32 հատ 128/184.96 մ ² /կգ Գաբիոններին կապող մետաղալար d=3.0մմ, 1հատ=1.2գծմ, 1 հատ=0.0665 կգ 27 հատ 32.4/1.8գմ/կգ մետաղյա ծող d=18մմ, 1գծմ=1,998կգ, 1հատ=1,0մ 4/8 հատ/կգ	մ ³	16.0	21.550	344.800
4	Գաբիոնային շարվածք 1x0.5x0.5 (քար) : Հիմնակմայք d=6.5 մմ , 1գծմ=0.260 կգ, 1հատ=9.3գծմ 8 հատ 74.4/19.35 գմ/կգ Ցանցը ամրակով d=3.0 մմ, 1մ ² =1.445 կգ, 1 հատ=2.5մ ² 8 հատ 20/28.9 մ ² /կգ	մ ³	2.0	24.800	49.600
5	Հետադարձ լիցք 0.65մ ³ շերտի տարողությամբ էքսկավատորով կողքի պահեստավորված գրունտով շերտ-շերտ տոփանումով:	մ ³	4.2	1.438	6.040
6	Հետադարձ լիցք բուլդոզերով գրունտի տեղափոխումը 5 կմ հեռավորությունից գրունտով շերտ-շերտ տոփանումով:	մ ³	46.2	2.710	125.202
